# Եղիպատրուշ

**Մակերես՝** 25.7կմ$^2$

**Բնակչություն՝** 739

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից 10-12 կմ հարավ-արեւելք, մարզկենտրոնից՝ 27կմ հեռավորության վրա: Այն համապատասխանում է պատմական Եղիպատրոշ գյուղին:Նախկինում ունեցել է Դամըջլու, Դամջալի, Դամջալու, Թամջառլու, Տամճըլու, Տամջերլու, Փամջիլու, Մռավյան անվանումները:
Գյուղի հիշարժան հուշարձաններից են 5-րդ դարում կառուցված եկեղեցու մնացորդները, ս. Աստվածածին կաթողիկե եկեղեցին, որը մասամբ վերանորոգվել է 1976 թ-ին:
Տեղադրված է Արագածի արեւելյան լանջերին, Ապարանի սարավանդում՝ ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն ցուրտ լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են: Հարուստ է աղբյուրներով:
1831 թ-ին ունեցել է 252, 1897 թ-ին՝ 1091, 1926 թ-ին՝ 1070, 1939 թ-ին՝ 1170, 1979 թ-ին՝ 677 բնակիչ, որոնց նախնիները տեղափոխվել են 1828-1829 թթ Պարսկահայաստանից եւ Ալաշկերտից: Համայնքի բնակչությունը կազմում է 800 մարդ, որից 51%տղամարդիկ են, 49%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 44%, աշխատունակները՝ 50%, հետաշխատունակները՝ 6%:
Գյուղն ունի 187 տնտեսություն: Ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր: Զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 70%, որոնց մեջ մեծ է վարելահողերի բաժինը՝ 160հա, արոտավայրերը կազմում են 120հա: Զբաղվում են անասնապահությամբ, բուծում են խոշոր եւ մանր եղջերավոր անասուններ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: